ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/11-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02 **-ը հունիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Մեժլումյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **15.01.2020թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/11-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***6,628,320 (վեց միլիոն վեց հարյուր քսանութ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00801026
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
	ԱՀ. ԱՀ 0206259

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/11-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
1.	Start 4 FIBRI-PREST a 480 tests	լրակազմ	40	115,560	4,622,400	15	15	10
3.	Start 4 PTT a 1200 tests	լրակազմ	6	115,440	692,640			6
4.	Start 4 Neoplastin CI plus, 300 tests	լրակազմ	60	21,360	1,281,600	20	20	20
11.	Տպիչի թուղթ Start 4 –Ի համար հատ	հատ	30	1,056	31,680		15	15
Ընդամենը					**6,628,320**			

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/11-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝						
				Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
1.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Start 4 FIBRI-PREST a 480 tests /	33691423/720	4,622,400	1,733,400	3,466,800	3,466,800	3,466,800	4,622,400	4,622,400	4,622,400
3.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Start 4 PTT a 1200 tests/	33691423/722	692,640	0	0	0	0	692,640	692,640	692,640
4.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Start 4 Neoplastin CI plus, 300 tests /	33691423/723	1,281,600	427,200	854,400	854,400	854,400	1,281,600	1,281,600	1,281,600
11.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Տպիչի թուղթ Start 4–Ի համար հատ/	33691167/595	31,680	0	15,840	15,840	15,840	31,680	31,680	31,680
Ընդամենը			**6,628,320**	**2,160,600**	**4,337,040**	**4,337,040**	**4,337,040**	**6,628,320**	**6,628,320**	**6,628,320**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ-ի գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Հ.Հ. Պետական եկամուտների կոմիտե
ՎՎՀ 02 06 259